

քանի որ կարգացուածը «գծուարամարս»
ըլլալուն պատճառաւ լաւ չին հասկցուիր,
չկարգացուած կը համարուին:

Եթէ միայն որոշ դասակարգի համար կը
հրատարակուին լրագիրներն ու գրքերը, ըսելիք
չունինք, բայց փորձով գիտենք թէ լրագիր-
ները կրնային շատ դիպուա ընդարձակել իրենց
ընթերցողաց շրջանակը, եթէ անոնց ըմբռն-
ողութեան պատշաճեցնել ուղէին իրենց գրչու-
թիւնը:

Մանաւանդ «ոտանաւոր» ըսուած գեղա-
րաններու մէջ ճմուռն, ճգնուած, խաշ հա-
նուած հայերէնը, եթէ կրնաս հայերէն կոչ...
լեզուի մը գեղեցկութիւնն իւր պարզութենէն
կը գտնուի ճշմոտութիւններու, սեղծեւթանք-
ներու դարն անցած պէտք է համարիլ: Նշանա-
կութենէ բոլորովին զուրկ չէ այն՝ շատ անգամ
ըսուածը, թէ արդի գրողներէն շատերը հայերէն
բառերով գաղղիներէն կը գրեն: Եւ ինչ զար-
մանալի երեւոյթ. այս կերպ հայերէն կը նշմա-
րուի՝ աւելի իբր սիրաշար գրողներու գրչին
տակ: «Պարզ գրել, ըսել չէ գռեհիկ լեզուաւ
գրել»: «Պարզ գրել», ով է միայն որ գրակա-
նութեան գանձարանը կը ձոխանայ:

Պարզ ու դիւրահասկանալի լեզուաւ գրել
ընանցողներու գրչին տակ շատ հաջողագիւտ
կը գտնուին՝ դժուարակնձիւ բառեր ու բա-
ցատրութիւններ, բայց մանաւանդ օտար բա-
ռեր: Մեր արեւմտեան գրական լեզուին մէջն
կամաց կամաց ընդունեցան օտար բառեր ըսուած-
ները. բայց նորերս բառ մը ելաւ հրապարակ
եւ առհասարակ կը ձգտի գալու եւ փառա-
ւորապէս զետեղուելու մեր գրական լեզուին
մէջ: Ի՞նչ է սա նորահայտ թեոք (գլ. geste)
բառը, զոր տասնեակներով կրնաս համրել
վերջերս եղած հրատարակութեանց մէջ: Ի՞նչ
տարբերութիւն կայ «շարժում», «շարժուածեւի»,
եւ թեոքի մէջ: Ականջին աւելի հնչող կը հնչէ
թեոք, բայց ամէն ականջի: Այս հարեւանցի
տեսութեան գործնական օրինակները կը հայթ-
հայթենք ուրիշ անգամ:

Հ. Գ. ՄԻՆԻՎԻՇԵԱՆ



ԻՐԱՆԱՐԱՆԱԿԱՆ

ՄԻՍԹԵՐ ԳՕԾԻ ԳՆՏՈՍՏԱՆԳԻՐՔԸ ԵՒ ՀԵՅՈՑ
ՀԻՆ ՔԱՆՔՈՍԹՐԱԿԱՆ ԻՐԱՆԻՆԻՔԸ

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԳ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՆԻՆԻՔԸ

(ԸՆԴՈՒՄԻՆԻՍՏԻԿ)

ՄԱՆ ԵՐՐՈՐԳ

ԸՆԴՈՒՄ ԻՐԱՆԻՆԻՔԸ:

Ե.

ԱՆԻՔ ԵՒ ԼՐԱՆԱՆ ԵՐՐՈՐԳ:

I.

Միսթար Գօծի Հայոց Գասապտանագրութեամբ
ու մի տարբերութիւն չի գրուում. «եփ-ն-ն-ն-ն»
իրաւունքի եւ օտար ընչքի վրայ փշրուած
իրաւունքի գաղափարներէ միջեւ: Այդ երկու
հասկացողութիւնները որոշուում են միեւնոյն ա-
նունով, միեւնոյն մտքով, այն է՝ նշանակուած են
իրեւ միայն «եփ-ն-ն-ն-ն»: Հին, տակաւին չզար-
գացած իրաւունքներում սովորաբար սեփակա-
նատէրը միաժամանակ համարուում էր տիրապե-
տող. իսկ ով տիրապետող էր որեւէ ստացածքի,
նա նաեւ ճանաչուում էր նոյն ընչքի սեփակա-
նատէր:

Ասկայն մօտից ընենլով գասապտանա-
գրութեամբ արծարծած սեփականութեան իրաւուն-
քի եւութիւնը, կարելի է նշմարել, որ Միսթար
Գօծի օրէնքներում, թէեւ ոչ այնքան որոշակի,
այնուամենայնիւ փորձ է արւում մի տեսակ ան-
շատել իրարից վերոյիշելով երկու հասկացողու-
թիւնները:

Իսկապէս Միսթար Գօծի Գասապտանա-
գրքի մէջ տարբերուում են սեփականութեան
եւ ցեխան տիրապետելու իրաւունքները: Դա
բացայայտ է ընտանեկան ստացածքի վերաբեր-
մամբ երկու ամուսինների միջեւ գոյութիւն ու-
նեցող յարաբերութիւններին: Անանկող մա-
հաւմը, ինչպէս արդէն մեզ յայտնի է ժաման-
գակն իրաւունքից, ամուսն չունեցող զաւակ-
ներ եղած գէպքում անցնում է ամուսնու ձեռ-
քը, որ պարտաւոր է պահել այդ, ուրեմն տի-
րապետել, բայց ոչ երբեք սեփականութիւն
համարել, որովհետեւ այդ գոյքի սեփականու-
թեան իրաւունքը պատկանում է իրօք զաւակ-
ներին, որոնց պէտք է յանձնի հայրը նրանց չա-
փահասութեան գէպքում (I, գլ. ԺԵԱ, 22):
Նմանապէս այդ ամուսնու մահով սրան պատ-

կանան ստացուածքը, եթէ չի եղել որեւէ կտակ, կամ տնօրինութիւն, անցնում էր կնոջ իրրեւ ժառանգութիւն, եթէ վերջինս ծնել էր զաւակներ. հետեւեալէս կինն էլ ստանում էր միայն ցկեանս տիրապետութեան իրաւունք այն ստացուածքի նկատմամբ, որը իրօք դառնում էր զաւակներին սեփականութիւն. իսկ ամուսնութեան դէպքում կինը ժառանգում էր « յաղաքս տնտեսութեան » մարդուց մնացած ստացուածքը (I, 42. 26). վերջին երկու բառերի իմաստից կարելի է հետեւեցնել, որ այստեղ գործ ունենք տիրապետութեան գաղափարի հետ: « Զաղաքս տնտեսութեան » բանը մեզ յիշեցնում է հին ուսանկան իրաւունքի մէջ գոյութիւն ունեցող նոյնանման երկույթի հետ, որ կոչւում էր *Κορμύλη* եւ պարփակում էր իր մէջ ցկեանս տիրապետութեան գաղափարը:

Ընչական իրաւունքի երկու հասկացողութեան՝ այսինքն սեփականութեան ու տիրապետութեան գաղափարների զատման գիծը նկատելի է մանաւանդ այն պարագայներում, երբ Դատաստանագիրքը հիմնադրում է սեփականութեան իրաւունքի գոյացումն որեւէ ընչքի աւել կամ պակաս տեւողական տիրապետութեան եւ օգտուելու փաստով: Վերջին պայմաններում սեփականութեան իրաւունքը հաստատուում է, եթէ որոշ ժամանակամիջոցից յետոյ անշարժ ստացուածքը գնողից յետ չի գնւում իր նախկին տիրոջ ձեռքով: Այս հարցին դատաստանագիրքի հենիմակը յատկացրել է երեք յօդած, որոնք ամբողջովին վերցուած են մովսիսական իրաւունքից եւ որոնցից հետեւեալ եզրակացութիւններն ենք հանում:

Հետեւելով մովսիսական օրէնքների այն սկզբունքին, որով հրէաները սովորութիւն ունէին իրենց եօթնամեայ ու յինամեայ յօքերնաներին Խօշ-Խիւն պարգեւել ստրուկներին, յատեալորեն, պարտքերին եւ ի հարկէ որոշ յատուցմամբ վերադարձնել վաճառուած կալուածներն ու անշարժ իրերը նախկին սեփականատէրերին, Հայոց Դատաստանագիրքը նշանակում է եօթ տարի ժամանակամիջոց որեւէ կալուածքի սեփականութեան իրաւունքը հաստատելու համար: Ըստ Միսիթար Գօշի՝ եթէ ադամա-Խիւն պատճառով որեւէ մէկը ստիպուած է լինում վաճառել իր կալուածքը, նա չլնիմաց եօթ տարւոյ չի կորցնում իր սեփականութեան իրաւունքը. ամեն մի յուպէ նա կարող է յետ վերցնել այդ կալուածքը իր գնողից, վաճարելով ստացած գինը: Հետեւեալէս այն անձը, որ գնել

էր կալուածք, ամբողջ եօթ տարի իրեն տակաւին չի համարում սեփականատէր ձեռք բերած կալուածքի, այլ միայն օգտուում է, միայն օժտուած է տիրապետութեան իրաւունքով: Միմիայն եօթ տարուց յետոյ արդէն որոշուում է վերջնականորէն կամ նախկին սեփականատիրոջ իրաւունքներին վերականգնումն եւ կամ գնողի սեփականութեան իրաւունքը այդնոր կալուածքի վերաբերմամբ. « իսկ եթէ ոչ կարիցէ փրկել յեւթնամն անտի յառաջ հաստատիցի վաճառն » (II, 42. 26.):

Այս օրէնքը Հայոց դատաստանագիրքի համաձայն չի վերաբերում բնաւ այն դէպքերին, երբ կալուածքը վաճառւում է ոչ թէ ազատութեան պատճառով, այլ միանգամայն այլ շարժառիթներում. զորօրինակ՝ զանազան յանցանքների ու պատիժների պատճառով: Այս դէպքում սեփականութեան իրաւունքը գոյանում է հենց նոյն տարին. « Ապա թէ ըստ այլոյ պատճառի վաճառն իցէ ի նմին ամի հաստատիցի » (Անգ.):

Նոյնն է տեղի ունենում ջրաղացի վաճառման ժամանակ (II, 42. 26.). նմանապէս, երբ վաճառւում է « տուն լնակութեան ի պարսպաւոր քաղաքի », սակայն այստեղ փրկանքի իրաւունքը տեսւում է ամբողջ մի տարի, ուրեմն սեփականութեան իրաւունքը գոյանում է միայն մի տարուց յետոյ, եւ կալուածքը բնաւ ենթակայ չէ Խօշ-Խիւն¹: իսկ քաղաքի պարիսպներից դուրս գտնուած կալուածքի համար գնողը սեփականութեան իրաւունքը որոշուում է այսպէս. « իսկ տունը, որ յաւանս իցեն, որոց պարիսպ ոչ իցէ շուրջանակի, ընդ անգս երկրի համարեացին եւ հանապաղ ընդ փրկանքս լիցին եւ ի թողութեանն ելցեն »:

Իսկաւ բնորոշ է իրաւական տեսակէտից այն հողերի սեփականութիւնը, որոնք թագաւորը տալիս էր իր իշխաններին: Եթէ վերջինները չինեն այդտեղ բերդ կամ աւան եւ շինացնեն աւերակները, այդ հողը դառնում է արգէն սեփականութիւն նոյն իշխանների եւ « զվին մահու նոցա » որդւոց նոցա լիցի հրամանաւ թագաւորի (II, 42. 26.). Նոյնն է միանգամ զատակարգերի համար՝ ազատների ու շինականների. « Սոյնպէս ընդ ձեռամբ իշխանաց ազատոյ լիցին եւ ընդ ազատաց ձեռամբ շինականք. յորժամ աւերս չինեսցին եւ հողս հատանիցեն ի մայրեաց, ստա-

¹ Համեմատ. Saalschütz, Das Mosaische Recht եր. 851:

² Մովսիսական օրէնք. Դեւա. ԻԵ. 31:

ցուած լիցի անփոփոխ եւ որդւոց նոցա յետ մահու (Անդ)։ Արեմն հողերը, որոնք տրւում են թագաւորի ձեռքով իշխաններին կամ իշխանների ձեռքով պապաներին եւ վերջինների ձեռքով էլ շինականներին, դառնում են ըստ Մխիթարի վաշի նրանց սեփականութիւն այն գէպքում միայն, երբ այդտեղ որոշ աշխատանք է թափւում, որպէս զի այդ հողերը շինացուն կամ արգասաւետ դարձնին։ Հետեւապէս դրուած հողերը միշտ ալ համարւում էին լոկ ստացող անձերի տիրապետութեան ներքոյ մի իրաւունք, որով հողերի վրայ տիրողները չէին կարող դեռ եւս անորին խտրութեամբ ըստ իրենց ցանկութեան. մի իրաւունք, որով ամեն մի բոլոր կարող էին տիրապետողից յետ պահանջել յանձնուած հողը, որպիսի փաստ ըստ երեւութիւն ստեպ էր տեղի ունենում եւ սովորական բան էր թւում։ Ապա թէ ոչ, ինչո՞ւ Գաստաստանգրքի հերկեալը ստիպուած է լինում խտու շեշտելու, թէ այն հողերը, որոնք ստացողներին, այսինքն տիրապետողների, աշխատանքի շնորհիւ դառնում են արդէն նրանց սեփականութիւն, չպէտք է յետ խնդրի եւ սեփականութեան իրաւունքները չպիտի բռնաբարւուն։ «Մի լիցի փոխել առանց մեծի եւ իրաւացի յանցանաց»։

Հողերի տիրապետութեան իրաւունքի փոխուիլը սեփականութեան իրաւունքի Մխիթար Գօշը կապում է աշխատանքի գաղափարի, թափած ֆիզիկական ջանքերի հետ. մի հասկացողութիւն, որ տիրապետել է շատ օտար ժողովրդական իրաւունքներում։ Որքան նմանութիւն հին գերմանական ու արլեմանեան իրաւունքների հետ, ուր գտնում ենք նոյն գաղափարի ներկայութիւնը։ Սեն-Գալէնի VIII եւ IX դարերի միաբանութեան հողային վկայագրւներում եւ պաշտօնագրերում (արլեմանեան) ստեպ յիշատակւում են, թէ հողերը դարձել են նրանց սեփականութիւն (dominium կամ proprietat) միայն նրանց աշխատանքի, թափած քրտնքի շնորհիւ — quod laboravi kum quod pudore acquisivi. — Արդեօք նոյն միտքը չի պարփակում ռուս ժողովրդի սովորութեան իրաւունքում գոյութիւն ունեցող БАНКА-ն։

Աշխատանքի այդ սկզբունքը պահպանուել է նաեւ Ժամանակակից հայերի սովորութեան իրաւունքում։ Գիւղական հայ ժողովրդի մէջ սովորական երեւոյթ է, որ հողին տիրապետելը եւ ապա սեփականութիւն դարձնելն արտայայտւում են արտը կամ ցանկացած հողը հերկելով

ու աղօսելով «Արեւն քրտնքն» ու աշխատանքի միջոցով հող սեփականացնելու գաղափարը մարմնանում է գիւղացու հայեացքներում գութանի կամ արօրի մէջ, որով խկապէս կարելի է մշակել հողը, Նոր-Բայազետի պաւառում օտարին պատկանած անմշակ հողը գիշերով հերկելը համարւում է ստացուածքի տիրապետութեան եղանակներից մէկը։ «10 տարուց աւելի էր, որ Նոր-Բայազետի տեղական զինուորական զօրամասի տրամադրութեան ներքոյ էր գտնւում մի արօտաեղի քաղաքին մօտ, 1883 թ. ամառը գիշերով մի քանի բնակիչներ (պէտք է նկատել, որ Նոր-Բայազետի բնակչութեան մեծամասնութիւնը զբաղւում է երկրագործութեամբ) այդ հողը, որ ճահճոտ լինելով իրեն վարելահող միանգամայն անպէտք էր, գիշերով հերկել էին եւ միւս օրը իրենց տիրապետական իրաւունքներն էին առաջագրւում այդ հողի նկատմամբ։ Նմանապէս էին վարուել նոյն քաղաքացիները ոմն Արծրունի ազգանունով հողատիրոջ արօտաեղիների հետ, որոնք առաջ բնակահարուած չէին եղել»¹։

II.

Սեփականութեան իրաւունքի մի այլ ձեւը (գլխաւորապէս շարժւուն ընչքի նկատմամբ) ծագում է անտէր ինչքը գրաւելու եղանակով, որոշ չափով հոմանիշ հռոմէական occupatio-ին. Res nullius occupant cedit. Այս կարգին ըստ Մխիթար Գօշի նախ եւ առաջ պէտք է վերագրել սեփականութեան իրաւունքը այն ստացուածքի վերաբերմամբ, որը ձեռք է բերւում պատերազմական աւարից, այսինքն թշնամուն պատկանած ընչքից (res hostilis). Այստեղ Գաստաստանգրքը տարբերում է երկու մասնետ. արդեօք պատերազմին մասնակցում էր թագաւորը, թէ ոչ։ Երբ պատերազմին անմիջապէս մասնակից է եղել թագաւորը, աւար վերցրած մարողը ոսկին պատկանում է բացառապէս թագաւորին, որը միայն մի տասնորդն այդ ոսկուց յատկացնում է յօգուտ եկեղեցուն. մնացեալ աւարն ու գերիները բաժանւում են երկու մասի, որից մէկը պատկանում է նոյնպէս թագաւորին, իսկ միւսը՝ ամբողջ զօրքին, ընդ սմին երկու կողմից էլ հանւում է մի տասնորդ եկեղեցու օգտին։ Իսկ եթէ թագաւորը մասնակից չի լինում պատերազմին, այն առնե՞ «ոսկին նմանապէս թագաւորի լիցի, եւ ի գերւոյն եւ յա-

¹ Юридическое Общество, 1884 г. Тифлис.

ւարէն տասնորդ թագաւորի, իսկ յեկեղեցին յիսնեորդիցն», մնացեալ ամբողջ աւարը դառնում է սեփականութիւն մասնակցող իշխանների ու զօրքերի (II, գլ. Ա)։ Դատաստանագրքի այս որոշումն անշուշտ հեղինակուած է մոփսիական օրէնքի ազդեցութեան տակ։

Ապա գրաւման եղանակով սեփականութիւն ձեռք բերելու՝ occupatio ձեւերին, որոնք յիշատակուում են մեր Դատաստանագրքում, հայրկաւոր է դասել հետեւեալ դէպքերը։

1. Ուտուր-վենալի (venatio) եւ յիսկուր-վենալի (piscatio) անկասած իրաւունք է տալիս որսորդին եւ ձկնորսին բացարձակ սեփականութիւն գարձնել գրաւած որսը, եթէ միայն իւր կալուածքի սահմաններումն է կատարուել այդ։ Իսկ եթէ որսը եւ ձուկն գտնուել է օտարի կալուածքում, այն ատեն որսորդի սեփականութիւն է դառնում գրաւածի $\frac{9}{10}$, իսկ միւս $\frac{1}{10}$ ը պատկանում է կալուածատիրոջ (II, գլ. Ժ)։

2. Գ-նի թիւ-ը (thesauri inventio) կարգաւորում է հետեւեալ կանոններով, որոնց հիման վրայ էլ որոշուում է սեփականութեան իրաւունքը։ Գանձը իրաւաբանօրէն համարուում է անայտ հին ժամանակները թաղցրած արժէքաւոր ինչք, որի տէրը իսկապէս անգոյ է ներկայումս։

ա) Երբ որեւէ մէկն կալուածքում գտնուած գանձը բաղկացած է հին թագաւորների ժամանակուայ գրաւներից, ձյն ատեն այդ գանձը դառնում է սեփականութիւն թագաւորի, եւ միայն $\frac{1}{10}$ տրուում է գտնողին, եթէ սա տուեալ կալուածքի սեփականատէրը չէ, եւ $\frac{1}{5}$ էլ կալուածքի տիրոջը։ Իսկ եթէ գտնողը միեւնոյն ժամանակ կալուածքի տէրն է, նա ստանում է միայն գիւտի $\frac{1}{5}$ ը (II, ԺԱ)։

բ) Երբ յայտնագործուի, թէ գտնուած գանձը թաղուած է հեղեղ օրեւէ նախարարի կամ «փարթամաց», նախնիքների ձեռքով եւ եթէ նրանց սերնդակից ժառանգները տակաւին գոյութիւն ունին, իսկ անթէ գտնուած գանձը հասնում է վերջիններին, միայն «տասնորդիցի արքունի եւ գտողին եւ տեղւոյն» տիրոջը։ Իսկ երբ բացակայում են այդ ժառանգները, գանձը դառնում է սեփականութիւն գտնողի (Անդ)։

գ) Իր սեփական կալուածքում գտած գանձը եւ իր նախնիքներից թաղուածը անշուշտ համարուում է սեփականութիւն գտնողին, որը միայն $\frac{1}{10}$ է հանում յօգուտ արքունիքի (Անդ)։

դ) «Եւ թէ վարձկանաց որ իցէ՝ գտնողն ոչ կարենմ իրաւացի տասնորդել, այլ մասնաւորել» (բաժին հանել) (Անդ)։

Զբացած կամ կորած առարկաները, որոնք կարող է գտնել զիպուածով մէկը եւ դարձնել իր տիրապետութեան իրաւունքի ենթակայ, դատաստանագիրքը չէ ձանաւում իրրեւ res nullius, այլ res alicuius, ուստի եւ չէ ընդունում սեփականութեան իրաւունք գտնուած ընչքի նկատմամբ։ Այս հարցում Մխիթար Գօշեի կարծիքը միանգամայն համապատասխանում է լիէ հռովմէական իրաւունքին, թէ մոփսիականի եւ թէ մի քանի այլ ժողովրդական իրաւունքներին, ուր տիրող կոմքի հակառակ ընչքի կուրուստի հետ միասին բնաւ չի կորել սեփականութեան իրաւունքը, այլ կորել է միայն իրական տիրապետութիւնը։ Ուստի ամեն մի օտար գտնող չի կարող համարուել սեփականատէր, այլ պարտաւոր է վերադարձնել ըստ պատկանելին։ Իսկ երբ չի յայտնուում տէրը, պէտք է պահպանել գտած ինչքն ըստ կարելոյն մինչեւ որ հանդէս գայ սեփականատէրը։ Ահա թէ ինչու Մխիթար Գօշե կորուստի վերաբերեալ սահմանած օրէնքն ամբողջովին անփոփոխ վերցրել է մոփսիական իրաւունքից (Բ. Օրին. ԻԲ. 1—3)։ Եւ դատաստանագրքի մէջ մտցրել է հետեւեալ բովանդակութեամբ. «Գուցէ տեսեալ զարջառ եւ զոչխար եղբօր քո մօրտեալ ի ձանապարհի անտես առնիցես զնոսա, այլ դարձուցանելով դարձուցես զնոսա եւ ածցես առ եղբայրն քո։ Ապա թէ չիցէ եղբայրն քո մօտ առ քեզ, եւ ոչ ձանաչիցես զնոսա, ժողովնացես զնոսա ի տուն քո եւ երկցին առ քեզ մինչեւ խնդրեսցէ զնոսա եղբայր քո, եւ տացես զնա։ Նոյնպէս արասցես զչէշ նորա. նոյնպէս արասցես եւ զհանգերձ նորա, նոյնպէս արասցես զամենայն կորուստ եղբօր քո, որ ինչ կորնչիցի ի նմանն եւ գտանիցես, մի իշխսցես անտես առնել զայն» (II, գլ. ԼԲ)։ Այս յօդուածին մեր հեղինակը իր կողմից միայն աւելացնում է, թէ «ամենայն կորուստ հաւատարիմ լինել եւ անվարձ, զի արտաքոյ իրաւանց դատաստանի է վարձուք զկորուստ դարձուցանել» (Անդ)։

Մխիթար Գօշե փորձում է որոշել սեփականատիրական իրաւունքները նաեւ հետեւեալ հետաքրքիր դէպքերի վերաբերմամբ։

Հանքերից գտնուած ոսկին, նաեւ ակն ու մարգարիտ երկրի բոլոր սահմաններում պատկանում է միփայն թագաւորին, իսկ արծաթը՝

որեւէ պատճառով փշացնում էր կամ գործածութիւնից զնասում էր գրաւ վերցրած իրերի իսկական արժէքը, այն ատեն նա պարտաւոր էր լրացնել իր կողմից այդ պակասը, կամ զեղելով առւած պարտքի ընդհանուր գումարից փնտրել համապատասխան արժէքը եւ կամ իւր կողմից այդ փնտն անմիջապէս վճարելով:

Այն հանգամանքը, որ Միխիթար Գօշը գրաւական իրաւունքին վերաբերեալ բոլոր որոշումները վերցրել է Մովսիսական օրէնքներից, մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ հայերի մէջ արդէ իրաւունքը շատ թույլ էր զարգացած եւ բնորոշում էր իւր նախնական գոյութեան գծերով, որոնք համապատասխանում էին մի իրաւական-սոցիալական միջավայրի, որտեղ իշխում էր ինքնագոյութիւն դատաստանի, սեփական կամայականութեան սկզբունքը: Իրաւունքի համաձայնական հետազոտութիւնը ցոյց է տալիս, որ իրաւունքի զարգացման սկզբնական նախնական աստիճաններում պարտատէրերը ոյժով եւ բռնութեամբ տիրանում էին սովորաբար իրենց պարտապանների ընդքին, նոյն իսկ յափշտակում որեւէ ինչք, որպէս զի գործով ստիպին վերջններին հատուցանելու իրենց պարտքը: Ուրեմն գրաւի իւր սկզբնական էութեամբ ուրիշ ոչինչ էր, եթէ ոչ յափշտակութեան եղանակով կատարուած ինքնագոյութիւն պաշտպանումն պարտատիրոջ շահերի: Այդ բնոյթն եւ այդ սկզբունքն էին կրում հին հռոմէական *pignoris capio*-ն, մալթոսական սովորոյթներում երբեմն տիրոջ *grabage*-ն եւ վերջապէս զանազան հոմանիշ իրաւական երեւոյթները հին գերմանական (*Lex salica*) ու հին իրլանդական (*Senchus Mor*) օրէնքներում:

Անշուշտ նոյն գաղափարը պիտի որոնել եւ հին Հայոց իրաւունքում, մանաւանդ ժողովրդի սովորոյթներում: Հենց “գրաւ”, բառը ուսրանից գոյացած գրաւել բայը պարզ ցոյց են տալիս իրենց ամբողջ իմաստը, իբրեւ խլելու, վերցնելու գործողութեան հետ կապուած մտապատկեր: Ահա թէ ինչու Միխիթար Գօշը, իւրացնելով գրաւական իրաւունքին վերաբերեալ որոշումները մովսիսական օրէնքներից, շնչում է հենց այն կէտերը, որոնք կապ ունին գրաւի նպատակով ինչք խլելու, ոյժով վերցնելու գործողութեան հետ եւ ընդգծում է այն նորմեր, որոնցով կարելի է պաշտպանել պարտապանների սեփականատիրական իրաւունքները: “Չտալ թող մտանել եւ առնուլ գրաւ, զի մի բռնութեամբ լիցի, այլ կամաւ հանենն է” (II, գլ. 2Բ):

Միխիթար Գօշի Դատաստանագրքի մէջ կան նաեւ երկու այլ յօդուած, որոնք նոյնպէս նիւթ են առած օտարի սեփականութիւնից օգտուելու իրաւունքը: Այդ յօդուածներն են “յալագս դատաստանաց մտողաց յարգի ընկրաց”, որոնք վերցրած են Մովսիսական օրէնքներից¹. “Եւ եթէ մտանիցես ի հունձս ընկերի քո, քաղեսցես ձեռք քովք զհասկն եւ մանգաղ մի արկանիցես յոճ ընկերի քո” (II, գլ. 4Ը), եւ “եթէ մտանիցես յարգի ընկերի քո, կերիցես խաղող մինչեւ յագինալ անձին քո, յայոց յամանս մի ամանութեան” (II, գլ. 4Թ): Այս սովորածներին Միխիթար Գօշը իր կողմից միայն աւելացնում է, օտարի սեփականութիւնից այդ սեսակ օգտուելը պէտք է չափ ու սահմանով լինի եւ սեփականատիրոջ համաձայնութեամբ, հակառակ դէպքում մեղանշողներին սպառնում է պատիժ:

IV.

Դիտողութեան առնելով ընչական իրաւունքը իրաւանց առարկայի վերաբերեալ, անհրաժեշտ է արդ տեսութեան առնել զա իրաւանց անձերի նկատմամբ: Ըստ անձերի ընչական իրաւունքը հին Հայոց մէջ կրում էր համայնական բնաւորութիւն, սեփականատիրութիւնը համայնական էր:

Երբ նախորդ գլուխներում վերլուծում էինք ընտանեկան ու ժողովրդական իրաւունքը, քանիցս շնչեղները հայ նահապետական գերդաստանի առանձնայատուկ կազմը, որտեղ տիրում է տան նահապետի հայրական իրաւունքը, ընդգծեցինք գերդաստանի համայնական բնոյթը, որով ընտանիքի բոլոր անդամները *patria potestas*-ի ներքոյ ներկայացնում էին մի հասարակական-տնտեսական միասնոր: Նահապետական գերդաստանը համարւում էր ընդհանուր գոյքի սեփականատէր. նրա բոլոր անդամները միաբան ոյժերով, ընդհանուր միջոցներով շահագործում էին համայնքի գոյքը եւ ստացած արդիւնքն էլ միաբան կերպով սպառում են:

Այդ համայնական-տնտեսական բնոյթը բացայայտ է Միխիթար Գօշի հետեւեալ յօդուածից, որտեղ նա որոշում է գերդաստանի անդամների իրաւունքները ընտանեկան ստացուածքի վերաբերմամբ. “Վաճառ ամենայն հաստառին, յորժամ որք վաճարին՝ ամենեցուն յանձնարարութեամբ եւ վկայութեամբ ընդ

¹ Բ օրին. Ի. Գ. 24. եւ Բ. օրին. Ի. Գ. 25:

ԱՅԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ՊՈՆՏԱԿԱՆ ՈՒՅՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԵՐ

ՄԱՍՆ Ա.

ՀԵՏՈՑՈՑԱԿԱՆ ՈՒՅԻՆՈՐՈՒԹԻՒՆ Ի ՊՈՆՏԱԿ

Ե. Գ. Կ. ԸՆԳԵՐՍԵՆԻ

— (ԸՐԻՆՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ) —

Դ. ՆԱԳԻՆԱՅԷ ՍԵՐԱՍՏԱՊԵՐԻՍ:

§ 13. — Հռոմեական ժամանակներուն իրաց համար՝ ԿէօՏնէ Գաղատիոյ տոմարովընի անկիւնը կ'իշխար, ուր կը կապուէր Կապպադովկիոյ հետ մէկ կողմանէ եւ Գաղատական Պոնտոսի հետ միւս կողմանէ: Գաղատական Պոնտոսի սահմանագիծը Գաղատիոյ հանդէպ կ'անցնէր հաւանօրէն ԿէօՏնէի հիւսիս-արեւելքը ձգուող Ջաբաշխէն երկայնու- թեամբն եւ լեռնեքուն վայէն մինչեւ Չորուսի դաշտին հարաւային ծայրը, իսկ Կապպադովկիոյ հանդէպ ունեցած սահմանագիծը կ'որոշուէր գծով մ'որ Եւազինայէն Սերաստապըրիս (Սուլիւ-Սերույ) տանող ճամբուն ճիշդ հարաւէն կ'անցնէր: Արդ ապէ ետքն իմ ճիշդ եղաւ հետազոտել այս ճամբան, որուն առաջին հատածը քարտէսներուն վրայ բացարձակ դատարկ տեղ մըն է:

Երեսին 17ին թողով ԿէօՏնէն՝ բունեցիքը Սերաստիս տանող շէտակ ճամբան մինչեւ Ջերմուկ- ները (Համա) որ 20 վայրկեան հեռուն են, անկէ ետքը խոտորեցանք արեւելեան հիւսիսարեւելքի ուղղութեամբ կոհակածեւ երկրի մը վայրէն, որ հոս հոն կը կտրուէր դէպ ի կէօՏնէ-Էօզիւ հոսող գետերով: Սուլիւնէ տեղը՝ որ Համամէն մէկ ժամէ աւելի՝ հեռու է, կը գտնուին քանի մը հնութեան մնացորդներ՝ որոնք հաւանօրէն Եւազինայի կը վերաբերին, բայց արձանագրութիւններ երեւան չե- լան: Ջաբաշխ լեռան կատարը կը հասնինք Կարա- կուզ (Karakuz) գիւղը, որ ժամ մ'աւելի հեռուն է, (ԿէօՏնէէն 8¹/₂ մղւն), որուն մօտերը գտանք հսկայ բոլորածաւ աւազան մը ապաւաժ ժայռի մէջ փորուած՝ ցայտուն շրթով: Ասկէ աստիճանաբար կ'իջնայ մեր ճամբան մացառապատ ելեւէջներու վրայէն՝ անցնելով Ահի-Գալիլէի (40 վայրկեան) եւ Եւզլուր (40 վայրկեան, Կարակուզէն 5¹/₂ մղւն հեռու) գեղերէն՝ դէպ ի թէքրի-Էօզիւի փոքր հովտին արեւելեան եզրը, որ Ալեքէրէ-Գումանի օժանդակ մէկ բազուկն է. Եւզլուրէն (դէպ ի հիւսիս-արեւելք) մէկ ժամ անդին բլուրներուն մէջ կը մտնէ գետը. իսկ ճամբան կ'անցնի նեղ ձորէն՝ որ հիւսիս-արեւելեան ուղղութեամբ կ'ընթանայ

1 Ուղեգիր. Եւստինիանոս էջ 205:

2 Կիպրոսի քարտէսին վրայ այս տեղ շատ աւելի հիւսիս դրուած է: Գիւղը ձախ ափին վրայ կ'իջնայ գետի մը՝ որ բոլորեւ-էջքէն բովն վար կը հոսի դէպ ի կէօՏնէ-Էօզիւ:

3 Ասկէ մէկ ժամ դէպ ի հարաւ հեռու է Մոս- լուկէ:

նոստ իցէ: Ընդ այսմ — թէ հայր վաճառիցէ, պարտ է որդւոց եւ զստերաց կամքն ընդ նմա լինել եւ եղբարց, որք ժառանգ իցենն Նմանա- պէս՝ թէ որդին վաճառէ --- հօրն եւ այլ եղ- բարցն եւ քերցն: Ըպա թէ ոչ — յորժամ կամին անգրէն դարձուցանել՝ իշխան լինին, թէեւ գրով հաստատուի իցէ: Ինչպէս որ գերդաստանն իրաւաբանօրէն անձնաւորուում է հայրական իշխանութեան մէջ, այնպէս էլ այդ գերդաստանի համայնական ստացուածքը մար- մնանում է հայրական սկզբունքում, մի գաղա- փարում, թէ այդ ստացուածքը անբաժան է, մշտական եւ սերունդէ սերունդ անցնում անփո- փոխ, քանի որ գոյութիւն ունի հայրենական տունը: Ուստի Մխիթար Գօշը համայնական սե- փականութիւնը ի տարբերութիւն անձնականի, կոչում է նշանակող, հայրենական, որ հովանիշ է ժողովրդական ներկայ սովորոյթներում կո- չուող պարզութեամբ կամ նօթութեամբ ստացուածքին:

Գերդաստանի համայնական սեփականու- թիւնն աւելի շեշտակի է աչքի ընկնում, երբ Մխիթար Գօշը ճանաչում է նաեւ ընտանիքի մի քանի անդամներին անհատական սեփականու- թեան իրաւունքը, գլխաւորապէս հարսերի: Դատաստանագրքի հեղինակն այստեղ հետեւել է ժողովրդական սովորոյթներին, որոնց համա- ձայն հարսի անձնական ստացուածքը (առնա- գինն, սարմիան եւ այլն). իբրեւ օտար գերդաս- տանից բերած, այլ ընտանեկան համայնքի պատ- կանած, չի կարող միակառնուել այն ընտանիքի համայնական ստացուածքի հետ, ուր այդ հարսը գալիս է միանգամայն խորթ, օտար հայրե- նեաց, տանից: Կանանց այդ առանձնայատուկ սեփականութեան իրաւունքի մասին արդէն նա- խորդ գլուխներից մեկում անթիւ ենք ունեցել խօսելու:

Յամենայն դէպս Հայոց Դատաստանագրքից նկատելի է, որ Մխիթար Գօշի ժամանակները հայ գերդաստանի համայնական սեփականու- թեան իրաւունքը սկսում է կազմալուծուել, նահապետական տնտեսիլը անձի հետ կապուած իրաւական սեփականատիրական գաղափարը կա- մայց կամաց կորցնում է իւր նշանակութիւնը, մեղի ապրով անհատական ինքնա-որոշման սկզբ- բունքներին: Ահա այդ պատճառով էլ Մխիթար Գօշը յատուկ յօդուածներ է խմբագրել, ուր որոշում է լուծանութեան երեւոյթները:

(ԸՐԻՆՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ)

Ն. ՍՄՈՐՈՒՆԵԱՆ

